# ԿԱՏԱՐՎԵՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԲԱՑ ԽՈՐԱՆԻ ՀԻՄՆՕՐՀՆԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 30 դեկտեմբերի 2000 թ.:**

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, կատարվեց Մայր Աթոռի տարածքում կառուցվող Բաց Խորանի հիմնօրհնեքի արարողությունը:

Ձեռամբ Վեհափառ Հայրապետի, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ներկայացուցիչ Տ. Սեպուհ եպս. Սարգսյանի, Երուսաղեմի Հայոց պատրիարքության միաբան Տ. Սևան եպս. Ղարիբյանի և Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանի Ս. Մյուռոնով օծվեցին Խորանի բոլոր հիմնաքարերը, որոնց վրա և կբարձրանան չորս ավետարանիչների անունը կրող այուները:

Խորանի օծումը կկատարվի գալիք 1700-ամյա հոբելյանական տարում, 2001 թ. մայիսին: Սեպտեմբերի 22-ին այս Խորանի առջև կօրհնվի Սրբալույս Մյուռոնը: Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հարևանությամբ կառուցվող Բաց Խորանի առջև հազարավոր հավատացյալներ հնարավորություն կունենան մասնակից լինելու սրբազան արարողությանը:

14 մ բարձրություն ունեցող Բաց Խորանի կողքին կառուցվում է նաև Մայր Աթոռի նոր գլխավոր մուտքը՝ 20 մ բարձրությամբ: Կառույցների հեղինակներն են ճարտարապետներ Ջիմ Թորոսյանն ու Ռոմեն Ջուլհակյանը:

Հավարտ հիմնօրհնեքի արարողության Բաց Խորանի և գլխավոր մուտքի հիմքերում տեղադրվեցին հուշագրեր՝ վկայություն առ այն, որ հիմնօրհնեքի, ինչպես նաև շինությունների հովանավորներ են Լուիզ Սիմոն Մանուկյանն ու մոսկվաբնակ Սենիկ Գևորգյանը:

# ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 5 դեկտեմբերի 2000 թ.:**

Այսօր Նորին Սուրբ Օծություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Երևանում կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճար: Այս անգամ Վեհափառ Հայրապետի այցելության առիթն էր հանդիպումը Երևանի Կոմիտասի անվան

պետական կոնսերվատորիայի, մանկավարժական ինստիտուտի, ինչպես նաև այլ բուհերի ուսանողների և երաժիշտ մանկավարժների հետ: Հանդիպման նպատակն էր կյանքի կոչել մի սքանչելի մտահղացում՝ մեկնել Հայաստանի տարբեր մարզեր և քաղաքներ՝ ուսանողների միջոցով հայ ժողովրդին, հատկապես մանուկներին և դպրոցականներին սովորեցնելու նախապես ընտրված երեք շարականներ: Միջոցառումն իրականություն է դառնում Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսությունների կազմակերպման Եկեղեցական և Պետական Հանձնաժողովների ղեկավարների միջոցով՝ ի դեմս Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի և Խոսրով Հարությունյանի: Այս միջոցառմանն իրենց մասնակցությունը բերեցին նաև կոնսերվատորիայի ռեկտոր, պրոֆ. Արմեն Սմբատյանը և ՀՀ Ազգային ռադիոյի երգչախմբի գեղարվեստական ղեկավար, պրոֆ. Տիգրան Հեքեքյանը:

Ուսանողական երգչախմբի կատարմամբ Մայր Տաճարի կամարների ներքո հնչեցին ընտրված շարականները՝ «Քրիստոս ծնաւ, այսօր տօն է», «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» և Կոմիտասի «Հայր մեր»-ը:

Վեհափառ Հայրապետը, տալով իր օրհնությունն ուսանողներին և հայտնելով իր գնահատանքը նրանց այդ գեղեցիկ և նվիրական ձեռնարկի առիթով, բարի երթ մաղթեց նրանց:

Երգչախմբի անդամներին բաժանվեցին շարականները պարունակող ձայներիզներ և գրքույկներ: Հանդիպման ավարտից հետո ուսանողական երգչախումբը Մայր Տաճարից անմիջապես մեկնեց Հայաստանի մարզեր:

1700-ամյակի շրջանակներում իրականացվող այս միջոցառմանը ներկա էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերշ. Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, 1700-ամյակի պետական հանձնաժողովի համակարգող Խոսրով Հարությունյանը, 1700-ամյակի եկեղեցական հանձնաժողովի վարիչ-քարտուղարի օգնական Աշոտ աբեղա Մնացականյանը, հանձնաժողովի ծրագրերի ընդհանուր պատասխանատու Լևոն Իվանյանը և այլ հոգևորականներ: